Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022 թվականի հոկտեմբերի 24-ից 27-ը
Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը՝

Ծովինար Սողոմոնյան

2" Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3" Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, հոկտեմբերի 24-ից 27-ը

4" Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

5" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության մշտապես գործող տեխնիկական կոմիտեի 237/238 նստաշրջանի ընթացքում ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալը ներկա է գտնվել կոմիտեի օրակարգում ներառված հարցերի քննարկումներին, որոնք ենթակա են կոմիտեի հավանության արժանացմանը: Նստաշրջանին չմասնակցելու դեպքում հնարավորություն չէր ընձեռնվի համագործակցել ՀՄԿ անդամ պետությունների հետ, մասնակցել քննարկվելիք հարցերին, նաև ՀՀ-ն չէր մասնակցի տեխնիկական կոմիտեի որոշումների ընդունմանը: Ընդ որում, տեխնիկական կոմիտեում որոշումները կայացվում են կոնսենսուսի միջոցով և ՀՄԿ-ի ընդհանուր քաղաքականության ուղղությունների մասով անդամ պետությունների, այդ թվում՝ ՀՀ-ի արտահայտած դիրքորոշումները հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ: Մշտական տեխնիկական կոմիտեն գործում է ՀՄԿ խորհրդի և քաղաքականության հարցերով հանձնաժողովի

ենթակայությամբ և կոմիտեի կայացրած որոշումների արդյունքներով ձևավորվում են վերոնշյալ մարմինների քննարկման ենթակա հարցերի օրակարգերը: Կոմիտեի հիմնական առաքելությունը մաքսային գործի ոլորտում տարբեր ստանդարտների ու գործիքների մշակման և (կամ) փոփոխությունների մասով առաջարկությունների ներկայացումն է ՀՄԿ խորհրդին, որն էլ ընդունում է վերջնական որոշումներ կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասով:

6" Քննարկված թեմաները՝

Կոմիտեում տեղի են ունեցել քննարկումներ «Կանաչ մաքսատան», էլեկտրոնային առևտրի, մաքսային հսկողության նպատակով տվյալների փոխանակման, փոստային առաքանիների կարգավորումների մասով համագործակցության, բացթողնման ժամկետների հաշվարկման մեխանիզմների, ինչպես նաև կոմիտեի հաջորդ նիստերին քննարկման ենթակա թեմաների վերաբերյալ:

Ներկայացվել են կոմիտեի նիստին նախորդող ժամանակահատվածում ՀՄԿ քարտուղարության կողմից կատարված աշխատանքները, հաշվետվությունները:

7"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Քննարկման ժամանակ բարձրացվել և կարևորվել է մաքսային մարմինների միջև համագործակցությունը խթանելու նպատակով տեղեկատվության փոխանակման արդյունավետ մեխանիզմների առկայությունը, կարևորվել են էլեկտրոնային առևտրի շրջանակներում իրականացված աշխատանքները, ինչպես նաև անդրսահմանային կոնֆլիկտային իրավիճակներ ունեցող երկրների միջև մաքսային համագործակցության հետ կապված հարցերը:

8" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Տեղեկատվության փոխանակման աշխատանքների մասով որոշվել է երկրներին տրամադրել լրացուցիչ ժամանակ մինչև նոյեմբերի 10-ը առաջարկներ ներկայացնելու համար: Անդրսահմանային կոնֆլիկտային իրավիճակներ ունեցող երկրների մաքսային գործառնությունների և մաքսային հսկողության իրականացման նպատակով որոշվել է ՀՄԿ-ի կողմից մշակել համապատասխան ուղեցույցներ՝

գործընթացները սահուն կազմակերպելու նպատակով, ապրանքների բացթողնման ժամկետների ուսումնասիրության հետ կապված հաստատվել է Համաշխարհային բանկի աջակցության պատրաստակամությունը այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների ֆինանսավորման իրականացման համար և այլն:

9" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ համագործակցության, տեխնիկական աջակցության պատրաստակամության և Հայաստանի Հանրապետության ՀՄԿ աշխատանքներին մասնակցության ակտիվացման վերաբերյալ:

10" Ստորագրությունը, ամսաթիվը

31.10.2022թ.